# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

## ՀՐԱՄԱՆ

«10» փետրվարի 2016 թվականի № 19-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԾԱՅՐԱԿԵՏԱՅԻՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ ARM WGS-84 ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2002 թվականի մարտի 11-ի N 225 որոշման 1-ին կետի պահանջներով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. **ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝ սույն հրամանը ստանալու պահից.**
   1) երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը և նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին ըստ մարզերի տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության (այսուհետ՝ ուսումնասիրություն) ընդերքօգտագործման իրավունք ստացած ընդերքօգտոգործողների ցանկը (այսուհետ՝ «ցանկ 3»).
   2) տաս աշխատանքային օրվա ընթացքում նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը էլեկտրոնային եղանակով տրամադրել «ցանկ 3»-ում ներառված ընդերքօգտագործողների ուսումնասիրության ծրագրերի «հանքերևակման շրջանում աշխարհագրատնտեսական բնութագիրը» մասերի, ուսումնասիրության թույլտվությունների, վերջիններիս վերաբերող (փոփոխող կամ լրացնող) ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի

հրամանների (առկայության դեպքում) և երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման պայմանագրերի 1-ին և 2-րդ էջերի պատճենները:

2. **Նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին.**

սույն հարմանի 1-ին կետում նշված «ցանկ 3»-ը ստանալու պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը թղթային և էլեկտրոնային եղանակով տրամադրել ցանկում նշված ընդերքօգտագործողների ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերին առնչվող՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում գտնվող հանքերևակման տեղամասի՝ ուսումնասիրության թույլտվության կոորդինատներով բնութագրվող տեղամասի սահմանները պարունակող իրավիճակային հատակագծերը.

3. **Նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության պետին.**

1) սույն հրամանի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համապատասխան նյութերը ստանալուց հետո կատարել «ցանկ 3»-ում ներառված ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի կոորդինատների ճշգրտումներ՝ ընդերքօգտագործողի ներկայացուցչի մասնակցությամբ (ներկայանալուց հրաժարվելու դեպքում՝ բացակայությամբ) իրականացնելով չափագրման աշխատանքներ.

2) «ցանկ 3»-ում ներառված յուրաքանչյուր տեղամասի համար կատարված ճշգրտումների արդյունքները՝ համապատասխան եզրակացությանք տրամադրել նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին:

3) «ցանկ 3»-ում ներառված յուրաքանչյուր տեղամասի համար ճշգրտումների իրականացման անհրաժեշտության բացակայության դեպքում տեղեկանք տրամադրել սույն հրամանի նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձին.

4. **Նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին.**

1) նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից «ցանկ 3»-ում ներառված ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի ARM WGS-84 կոորդինատային համակարգով ճշգրտված ծայրակետային կոորդինատների վերաբերյալ համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում համադրել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա նյութերի կոորդինատների հետ և համապատասխանության դեպքում՝ ընդերքի տրամադրման գործակալություն ներկայացնել եզրակացություն՝ տեսչության եզրակացության հետ միասին.

2) նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից կատարված աշխատանքների արդյունքում ճշգրտված ծայրակետային կոորդինատների և ֆոնդում առկա նյութերում կոորդինատների մեջ

անհամապատասխանությունների առկայության դեպքում՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը՝ համատեղ քննարկումներ և ճշգրտումներ կատարելու նպատակով:

5. **Նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին.**

   սույն հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված եզրակացությունները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարին ներկայացնել առաջարկություն՝ կցելով համապատասխան կազմակերպության թույլտվության մեջ փոփոխություններ իրականացնելու մասին հրամանի նախագիծ և տեսչությունից ու գործակալությունից ստացված եզրակացությունները (անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր):

6. **Նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության, ընդերքի տրամադրման գործակալության պետերին և նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին.**

   Սույն հրամանով և ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 15.09.2015 թվականի թիվ 395-Ա հրամանի 6-րդ կետով նախատեսված աշխատանքների իրականացման վերաբերյալ ամսեկան հաշվետվություններ ներկայացնել սույն հրամանի նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձին:

7. Սույն հրամանով սահմանված «ցանկ 3»-ի և ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 15.09.2015 թվականի թիվ 395-Ա հրամանով սահմանված «ցանկ 2»-ի հետ կապված գործողությունների իրականացման վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի սեպտեմբերի 1-ը:

8. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության պետին:

ԵՐՎԱՆԴ ՋԱԽԱՐՅԱՆ